

րես հաստատութիւնը եւ անոր հովանիին ապաստանած ժողովուրդը օգտով եւ հրաշքով կ'ապրին:

Զարաննգ մտայնութեանց ինչ գարշաբանութիւններ, որոնք մութին մէջ պահուելու իրենց նենգութիւնն ու սադրանքը օրուան լոյսին այս կերպով կ'ուզեն բերել: Մարդեր որոնք իրենց իրական հոգին կորսնցնելէն վերջ, «Ազդարար»ի եւ «Յուսաբեր»ի էջերուն վրայ, անգամ մը եւս կը կորսնցնեն զայն, յանուն «ազգային նախանձախնդրութեան եւ շահերու» ազգային իրական արժէքներն ու անոնց ճշմարիտ պահակները նշաւակելով: Տեղին է կրկնելու ծանօթ խօսքը, ո՛վ արդարութիւն, որպիսի անարդարութիւններ կը գործուին քու անունովդ:

Ամէն բանէ առաջ, արդար եղէք եւ գուրգուրոտ, ոչ թէ Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան նկատմամբ, որոնք եկեղեցիին ու ազգին խոնարհ ծառաներ են միայն, եւ եթէ չեն կրնար ընկն ամէն ինչ, կ'ընեն սակայն իրենց կարելին, պահելու եւ պահպանելու համար ազգապարծան այս ժառանգութիւնը, այլ եղէք արդար այս փառաւոր Հաստատութեան նկատմամբ, որ ձերն է, անոր այսօրուան տագնապի մատնուած պահապաններուն եւ ծառաներուն ըլլալու փոխարէն:

Մենք նուաստ զինուորներն ենք միայն մեր ժողովուրդի դարաւոր իրաւունքներուն եւ պահապանը անոր սրբութեանց: Եթէ յաճախ զայրոյթով չենք կրնար արժեւորել ամէն անկիւնէ, ամէն շահէ եւ յետին հաշիւէ բխող աղմուկները, համաձայն իրենց բխման շարժառիթներուն, առիկա կ'ընենք նոյնիսկ ի շահ այս ազգին Տանը: Յանուն ազգին եղած այս նախանձախնդրութիւնը չի նշանակեր ազգին իրաւունքը Միաբանութեան մը մենաշնորհը նկատել, ինչպէս կը մտածեն ոմանք դժբախտօրէն: Հետեւաբար ինքնագով եղած չենք ըլլար, եթէ ըսենք թէ «Ազդարար»ն ու «Յուսաբեր»ը, յանուն նոյնիսկ մեր ժողովուրդին, շնորհակալութեան պարտք մը ունին բոլոր անոնց՝ այսինքն իրենց չհաւանած Երուսաղէմի Ս. Յակոբեանց ափ մը Միաբաններուն, որոնք իրենց արեւնն ու քրտինքը իրարու բերած՝ կ'ընեն իրենց կարելին, հաւուր աղէտի ընդմէջէն պահելու եւ պահպանելու

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Հետեւել հեռագիրը՝ ուղղուած Գեր. Տեղապահ Ս. Զօր, կը գումար վաճառուի, Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ Հայրապետին, Տ. Տ. Գարեգին Ա. շնորհազարդ կաթողիկոսին:

Պէյրոս, 21 Յունիս 1952

Գեր. Տ. Եղիշէ Արքեպ. Տէրէրեան
Տեղապահ Հայոց Պատրիարքեան
Երուսաղէմ

Խորունկ եւ անմխիթար վիճով կը հաղորդեմ Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին վախճանումը:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Նոյն օրն իսկ, ի դիմաց Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի Հայ ժողովրդեան, Գեր. Տեղապահ Ս. Հայրը շրջած է հետեւել հեռագիրը:

Երուսաղէմ, 21 Յունիս 1952

Գեր. Տ. Խաղ Արքեպ. Աջապահեան
Անքիլիաս

Ամենախորունկ կսկիծով ստացանք Նորին Մերութիւն Գարեգին Կաթողիկոսի անդամանելի կորսեան լուր: Յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ մեր համայնքին կը ներկայացնեմ մեր անկեղծ ցաւակցութիւնները: Պիտի ջանանք անմխալէս զայլ, անձամբ մասնակցելու համար յուղարկաւորեան:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ
Տեղապահ Ս. Աթոռոյ

ազգին այս իրաւունքը: Մեզի դէմ ըլլալու փոխարէն, մեզի հետ ջանացէք ըլլալ, ազգային շահերու մեծարարքառ մունետիկներ, այդ կերպով միայն կատարած կ'ըլլաք ձեր ազգային պարտքը:

ԽՄԲ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 11 Մայիս. — Կարմիր Կիւսկէ. Ս. Պատարագը Ս. Գարուսթեան Տաճարի Բ. Գողգոթայի վերնամասերան մէջ մատոյց Հոգ. Տ. Զատարագեց Հոգ. Տ. Վարուժան Արեղայ Զինչինեան:

● Կիր. 18 Մայիս. — Տոմ Երեման Ս. Խաչին (31), հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գողգոթայի մեր վերնամասերան մէջ, Տ. Վարուժան Արեղայ Գաղարանեան:

● Կիր. 25 Մայիս. — 12. or Յիմանց. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գարուսթեան Տաճարի Բ. Գողգոթայի մեր վերնամասերան մէջ, Տ. Վարուժան Արեղայ Գաղարանեան:

● Դչ. 28 Մայիս. — Յ. մ. Ժամը 2ին, Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Դեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի բարձրացաւ Համբարձման Երեան աւանդական ուխտատեղին: Սրբատեղւոյն լրայկատարուեցաւ Երեկոյեան Ժամերգութիւնը: Երկու յաջորդ օրուան մեծահանդէս նախատեսակը: Երկրորդ օրուան կատարուեցան նաեւ «Եկեցեք»-ի և «Հիմա»-ի արարողութիւնները, որոնց յաջորդեց ատաւոտեան Ժամերգութիւնը, Միաբանութիւն և Ժողովուրդ օրտի գոհունակութեամբ վերաբարձան մայրավանք ու զիշերին:

● Եչ. 29 Մայիս. — Համբարձումն. Վիմակ. առաւօտեան Ժամը 6.30-ին, Միաբանութիւնը, Դեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի գլխաւորութեամբ, բարձրացաւ Զինչինեանց լեռ. «Հրապարակ» մասնաւոր մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Դեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան ու քարոզեց կուռ և խմբաւոր լրջ զարուգ մը օրուան տունին և խորհուրդին լուրջ: Քարոզէն ետք, կատարուեցաւ հայրապետական մաղթանք, Մայր Աթոռոյ Սրբէն Էջմիածին փոխարութեան տունին առթիւ, գլխաւորութեամբ Դեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի, Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ «Անդառան» որմէ վերջ Միաբանութիւն և Ժողովուրդ շքերթով վերադարձաւ մայրավանք:

Յետ միջօրէին ալ Ս. Գողգոթայի Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ, Ժամերգութեան անուան «Անդառան», Դեր. Տ. Սուրէն Եպս. ի հանդիսակցութեամբ:

Զինչինեանց լեռան Համբարձման սրբավայրը իշխանութեան հսկողութեան ներքեւ կը գտնուի այժմ: Սրբատեղիին սեփականատէրերը երեք իրաւակից պատրիարքութիւններն են, որոնք տունին նախընթաց օրն ու յաջորդ օրը, իրենց վրանները կը լարեն շուրջանակի սրբատեղւոյն մէջ: Սրբատեղիին ամենէն աչքի զարնող և գեղեցիկ վրան ունեցողը հայերն են, իրաւակից պատրիարքութեանց վրաններուն քով ի վեր, հետեակ աղբերն ալ, Դպտիներ և Ասորիներ, ի-

րենց կարգին ունին իրենց վրանները, աւելի փոքր, որոնց ներքեւ տունին հանդիսաւոր պաշտամունքը կը կատարեն, կարգաւ խնկարկելով Տիրոջ Համբարձման և ոտքի հետքերը կրող Ժայ. Ռին շուրջ: Հայեր և Յոյներ տարին երկու անգամ պաշտամունք կատարելու իրաւունք ունին:

● Եր. 31 Մայիս. — Երեկոյեան Ժամերգութիւնն ու Բ. Դաղկազարդի նախատեսակը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, հանդիսակցութեամբ Դեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի:

● Կիր. 1 Յունիս. — Բ. Դաղկազարդ. Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց Պատարագեց Դեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, պատարագի ընթացքին եկեղեցին ամբողջովին լցնող Ժողովուրդի ներկայութեան Դեր. Սրբազանը կատարեց քահանայական ձեռնադրութիւնը, Բարեշնորհ Տիր. Յովսէփ Սրկ. Նազարեանի, որ կոչուեցաւ Տ. Դեղրդ Արեղայ, յերկանները ամբողջ, խոր լուսութեամբ և զգացումած այս տաւորիչ արարողութեան երկիրդ ածութեամբ կը հետեւին: Ողջոյն ժամանակ Դեր. Սրբազանին պատարակուեցաւ քարկաւաքը Ողջոյն կը բնէր նորած քահանայէն:

● Եր. 7 Յունիս. — Ս. Գողգոթայի Մայր Տաճարին մէջ Երեկոյեան Ժամերգութեան վերջ մեծ վայելուչ կերպով կատարուեցաւ Հոգեպալքատեան նախատունը, հանդիսակցութեամբ Դեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեանի:

Իսկ իրիկնաղէմին «Եկեցեք»-ի և «Հիմա»-ի արարողութիւններ, տրամաշուք և խորհրդաւոր:

● Կիր. 8 Յունիս. — Հոգեպալքատեան, հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գողգոթայի Մայր Տաճարին մէջ, Դպրաց դասը, զեկաւարութեամբ Դեր. Տ. Ռուբէն Արքեպս. ի կ'երգէր Եկեղեցւոյն քահանայն պատարագը, Պատարագեց և քարոզեց Դեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան:

Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդառան», հանդիսակցութեամբ Դեր. Տ. Նորայր Սրբազանի, որուն յաջորդեց Երեկոյեան Ժամերգութիւնը:

● Կիր. 15 Յունիս. — Ս. Եղիայի մարգարէին. Ս. Պատարագը Ս. Գարուսթեան Տաճարի մեր Բ. Գողգոթայի վերնամասերան մէջ մատոյց Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

— Յ. մ. Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ Երեկոյեան Ժամերգութիւնը, մեծ կատարուեցաւ Երեկոյեան յիշատակին նախահաւակ ապա Ս. Հովհաննիսեանց յիշատակին նախատեսակը, Դեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի հանդիսակցութեամբ:

● Բչ. 16 Յունիս. — Ս. Կուսմանց Հովհաննիսեանց. առաւօտեան Ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, զոր մատոյց Հոգ. Հովհաննիսեանց մատարան մէջ, զոր մատոյց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանաման, Յետ Ս. Պա-

տարագիր, Մխարանութիւնը հիւրասիրութեցաւ Ս. Հրեշտակապետաց վանուց նորընտիր Տեսչի՝ Հոգ. Տ. Վարուժան Արղ. Դասպարանեանի մօտ:

● Ուր. 20 Յունիս. — Ս. Գրիգոր Լուսաւորչի նախատեսակը հանդիսաւորապէս պաշտօնեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի:

● Շր. 21 Յունիս. — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի (Եյն ի վիրապէն). Ս. Պատարագը մատուց. Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Ստեփանոս մատարան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի սեղանին վրայ:

— Իսկ երեկոյեան, հանդիսաւորապէս տօնուեցաւ Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի նախատեսակը, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, նախատեսակէն վերջ երգութեցաւ «Տէր ողորմեա», ծնկաչոք և երկիւղալից. ամբողջ ժողովուրդը միաբերան կը հետեւէր երգեցողութեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Բշ. 26 Մայիս. — Կ. Վ. Ժամը 5ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի, օդային զօնով մեկնեցաւ Պէյրութ և վերադարձաւ Շր. 31 Մայիս յետ-միջօրէին:

● Շր. 31 Մայիս. — Կ. Վ., Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովի անդամներուն, բացումը կատարեց Ս. Թարգմ. վարժարանի տարեկան պաղարին:

● Եշ. 5 Յունիս. — Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Բրիտանական Ընդհ. Հիւպատոսի տան մէջ եղած ընդունելութեան՝ Ն. Վ. Էլիզապէթ Բ. Թագուհիին ծննդեան տարեդարձին առթիւ:

● Կիր. 8 Յունիս. — Կ. ա. Ժամը 9ին, Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան Նոր Երուսաղէմ անցաւ, Ս. Պատարագ մատուցանելու մեր մատարան մէջ և վերադարձաւ Դշ. 10 Յունիսի Կ. Վ.:

— Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Անուշաւան Արղ. Զղջանեանի, ներկայ գտնուեցաւ Մարոնիթ համայնքի կողմէ տրուած հանդէսի մը, Լատինաց վանքի սրահին մէջ:

● Բշ. 16 Յունիս. — Առաւօտուն, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Տնօրէն Ժողովի անդամներուն, բացումը կատարեց Ժառ. վարժարանի և Ընծայարանի ամսվերջի քննութեանց:

● Շր. 21 Յունիս. — Կ. Վ. Ժամը 3.30-ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը օդային ճամբով մեկնեցաւ Պէյրութ, մասնակցելու Ն. Վ. Տ. Տ. Դարեգին Ա. Կաթողիկոսի օծման և Թաղման կարգերուն:

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ա Կ Ա Ն Զ Ե Ռ Ն Ա Դ Ի Ռ Ռ Թ Ի Ի Ն
Ս. Ա Ռ Ռ Ռ Ե Ն Ն Ե Ր Ս

31 Մայիս, Բ. Ծաղկաղարդի նախատեսակին, Ս. Հրեշտակապետաց Եկեղեցիին մէջ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի հանդիսապետութեամբ և խուռներամ ժողովուրդի ներկայութեան, տեղի ունեցաւ Բար. Յովսէփ Սրկ. Նաղարեանի, քահանայական կոչման արարողութիւնը, խառտաւիլակութեամբ Ժառ. վարժ. Ի առժմ. Տեսուչ՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեանի:

Յիշեալը ծնած է Լիւհան (Պարսկաստան) 1925ին, աւարտած է տեղւոյն Աղզ. վարժարանը: 1947ի սկիզբը եկած է Երուսաղէմ և ծառայած է Տնօրինական Սրբավայրերու մէջ՝ Ս. Աթոռոյ բոլորանուէր իր ծառայութեանը համար ամեն. քէն սիրուած, լուրջ և իր կոչումին զիտակից՝ կը կանչուի ծառայութեանը Հայաստանեայց Առաք. Ս. Եկեղեցիին:

Յաջորդ օրը, Գեր. Տ. Սուրէն Եպս., Ս. Պատարագի ընթացքին կատարեց ձեռնադրութեան կարգը, անուանակոչելով Բարշ. Սարգաւազը Տ. Գէորգ կուսակիռն քահանայ:

Գրաւիչ ու խորհրդաւոր էր պահը երբ ձեռնադրեալը, Սրբազան Բեմէն իր ուխտը կ'ընէր ձեռամբարձ:

Իսկ երեկոյեան տեղի ունեցաւ վեղարի տընութիւնը, ձեռամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, որ իրրեւ հոգեւոր հայրը ձեռնադրեալին, խօսեցաւ խրատական քարոզ մը, շնորհով պէտքը նոր և կարող ուժերու, որոնց այնքան պէտքը ունի Հայաստանեայց Եկեղեցին այս օրերուն:

Սիոն այս առթիւ իր շնորհաւորութիւններուն հետ կը մաղթէ որ Տէրը շնորհազարգէ զինքը և ընէ «մշակ առանց ամօթոյ»:

